05.07.2017

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐՀԱՆՔ-ՈՒՂԵՐՁԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի համաքաղաքացիներ

Այսօր Հայաստանի Հանրապետության տոնացույցն ազդարարում է մեր պետականության կարևորագույն տոներից մեկի՝ Սահմանադրության օրվա մասին: 1995 թվականի հուլիսի 5-ին հայ ժողովուրդն <<Այո>> ասաց մեր երկրի գլխավոր փաստաթղթին՝ դրանով իսկ հստակեցնելով պետականության մեր ճանապարհը:

Հավատարիմ մնալով ժողովրդական սկզբունքներին, հաշվի առնելով մեր իրականության առանձնահատկությունները, աչքի առաջ ունենալով աշխարհի փորձը՝ կյանքի կոչվեց մեր երկրի գլխավոր և հիմնական օրենքը:

Արձագանքելով տեղի ունեցող փոփոխություններին և բարեփոխումների պահանջը դարձնելով օրակարգային՝ արդեն 22- ամյա կենսագրություն ունեցող Սահմանադրությունը 2005 և 2015 թվականներին դրվեց հանրաքվեի և ստացավ ուղեգիր, որի առանցքում համազգային նպատակներն ու արժեքներն են:

Սահմանադրությամբ ամրագրված են հիմնարար շատ սկզբունքներ, որոնց նկատմամբ մեր հարգանքը պետք է լինի ընդգծված, որովհետև կայացած և ուժեղ պետության սկիզբն սկսվում է այստեղից և շարունակվում՝ որդեգրելով իրավական պետությանը բնորոշ բոլոր դրույթները և ուղենիշները:

Չմոռանանք,որ Մայր օրենքն ամենից առաջ յուրաքանչյուր քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները վավերացնող փաստաթուղթ է, մարդակենտրոն հռչակագիր, որի կենսագործման համար պատասխանատու ենք բոլորս:

Այս տարի առաջին անգամ հուլիսի 5-ին նշվում է նաև պետական խորհրդանիշների օրը: Կայացած ու անկախ պետության վավերագրերը՝ ՀՀ պետական դրոշը, զինանշանը և օրհներգը , ամբողջացնում են մեր երկրի դիմագիծը՝ դառնալով այցեքարտ ու կրողը հայ ժողովրդի պատմության և մշակույթի ինքնատիպ արժեքների:

Յուրաքանչյուրիս վերաբերմունքով է պայմանավորված , թե մեր պետական խորհրդանիշների նկատմամբ ինչպիսին կլինի աշխարհի վերաբերմունքը:

Սիրելի համաքաղաքացիներ

Շնորհավորում եմ բոլորիս մեզ համար անչափ կարևոր ու նվիրական օրվա առթիվ, յուրաքանչյուրս մեր տեղում , մեր հնարավորությունների սահմաններում պետք է նպաստենք, որպեսզի մեր երկիրը հաստատուն քայլերով առաջ գնա՝ հավատարիմ սահմանադրական մեր ընտրած ուղուն, որպեսզի ապրենք և արարենք օրինապաշտ և իրավական երկրում բարեկեցիկ և արժանապատիվ կյանքով: